

Ո՞Վ Է ԳՐԻԴՐՈՒ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՀԻՇԱՏԱԿԱՍ ՆԻԿՈՂԱՍ ԶՈՐԱՎԱՐԸ

Գ. Վ. ԱՐԳԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

«Գամազտականի» հմուտ հետադոտող Գ. Մենելիշյանը XI դ. նշանավոր գիտնական Գրիգոր Մագիստրոսին անվանել է «ծովածավալ հմտությամբ գիտնական»¹։ Եվ հիրավի՝, հայկական, հունական, հռոմեական, իրանական, վրացական, արաբական, ասորական և այլ մշակույթների բնագավառում ունեցած բաղմնավորմանի պատրաստություններով Գրիգոր Մագիստրոսը դուրս է գալիս ազգային սահմաններից և մտնում է իր ժամանակի ամենազարգացած մտավորականների շարքը։ Նրա գործերի մեջ անթեղված են հայ և զանազան այլ ժողովուրդների բանավոր ու գրավոր ավանդությունների, ինչպես նաև՝ պատմական անցյալի ուսումնասիրման համար անսպառելի պաշարներ։

Բնածին, արտակարգ տաղանդով օժտված և զարմանալի ինքնատիպ մտածողի մատենագրական ժառանգությունը, սակայն, մինչև օրս պատշաճորեն չի հետազոտվել։ Դրա գլխավոր պատճառը գիտնականի բարդ լեզուն ու անսովոր մտածողությունն է, որի հետևանքով այս նշանավոր գիտնականի շատ մտքեր թերևս մինչև վերջ էլ մնան որպես անիմանալի հանելուկներ²։

Հանելուկային մի շարք արտահայտություններով է լցված նաև մեր ալ-սորվա քննության նյութը հանդիսացող այն բանաստեղծությունը, որն սկսվում է «Լուաֆ քէ Եկն» բառերով³։ Որպես առմիշտ անվերծանելի մնացող արտահայտություններ են ներկայանում մեզ, օրինակ, «վարդանասարն պիսակ», «կողբայինն կատար» և «փիղսաժանի անհառի» արտահայտությունները⁴, որոնց չիբրջնական ճշգրիտ լուծումը կախված է միայն և միայն Մագիստրոսի

1 Գ. Մենելիշյան, Գրիգոր Մագիստրոսի Գամազտականի ամբողջական լուծումը, Վիեննա, 1912, էջ 3։

2 Հայագետ Ն. Էմինը գեոեա 1861 թ. գրել է, որ Մագիստրոսի գործերը «գեո երկար ժամանակ կմնան ձեռագիր վիճակում», որովհետև նրանց հրատարակությունը «կապված է մեծ գծվարությունների հետ»։ «Բացի բազմաթիվ լավ ձեռագրերից՝ Գրիգոր Մագիստրոսի հրատարակվող պետք է ունենա հունարենի խոր իմացություն և մոտիկից ծանոթ լինի առհասարակ հին աշխարհին» (В ар дан Великий, Всеобщая история, пер. Н. Эмян, Москва, 1861, էջ 205)։ Էմինի սույն հայտարարություններից կես դար անց՝ 1910 թ. Կ. Կոստանյանցը Ալեքսանդրապոլում հրատարակեց Մագիստրոսի թղթերը։ Սա գիտական մեծ սխրագործություն էր, «բայց հրատարակությունը դեռ բավարար չէր Պետք է ... մեթ ու խրթին կտորները լուսարանել» (Մ. Արեղյան, Նրկեր, հ. Դ, Նրևան, 1970, էջ 46, ծթ. 9)։ Կոստանյանցի հրատարակությունից հետո որոշ «մեթ ու խրթին կտորներ» արգեն լուսարանվել են, բայց հիմնական աշխատանքը դեռ մնում է։ Առանց այդ աշխատանքի Մագիստրոսը չի կարող գիտական հասարակայնությունը ներկայանալ իր ամբողջ ձեռնարկով։

3 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 234։

4 Նշված արտահայտությունները աշխարհարար թարգմանվել են այսպես՝ «վարդանասար խայտաբեծ», «կատարը Կոտուրի», «փղաժանի ահավոր» (տե՛ս Ա. Մնացականյան, Հայ գրականության քրեստոմատիա, Նրևան, 1970, էջ 133)։ Մեզ անհամոզիչ թվացող այս թարգմանություններին կանգրագառնանք տաղին նվիրված առանձին հոդվածում։

տաղի սկզբնական անաղարտ բնագիրը պարունակող որևէ ձեռագրի հայտնաբերումից:

Սույն (և տաղում առկա մյուս բոլոր) «մուժ ու խրթին կտորներին» լուսաբանմանը և առհասարակ տաղի ամբողջական վերծանմանը մենք նվիրել ենք հատուկ ուսումնասիրություն, որը դեռևս չի հրապարակված: Այդ ուսումնասիրության մեջ քննարկված է նաև «գիրչեբարսուն բուլղարաց» արտահայտությունը, որին մենք տվել ենք նոր բացատրություն: Մանրամասնությունները թողնելով նշված ուսումնասիրությանը՝ առայժմ Գրիգոր Մագիստրոսին հասկանանք այնպես, ինչպես մինչև այժմ հասկացել և ներկայացրել են Ն. Բյուզսունդացին⁵, Կ. Կոստանյանցը⁶, Հ. Բարթիկյանը⁷, բուլղարացի գիտնականներ Դ. Անգելովը, Վ. Գյուզելը⁸ և այլք:

Այս բոլոր մասնագետները «գիրչեբարսուն բուլղարաց» արտահայտությունը միացնելով միևնույն տաղում գտնվող «վատահամբավ Նիկողոս» արտահայտությանը, եզրակացրել են, թե Գրիգոր Մագիստրոսն իր տաղը դրել է ընդհանրաբուլղանդական զորավար Նիկողայոս Քրիսելիոս Բուլղարի⁹, որն իբր ղեկավարել է Հայաստանը նվաճելու նպատակով մեր երկիրը ներխուժած բյուզանդական զորքերին: Անգելովը և Գյուզելը նույնիսկ հարկադրված են եղել խոսել այն մասին, որ «այդ բուլղարացին շատ վատ հիշողություններ է թողել հայ ժողովրդի մեջ»: «Բուլղարիայի պատմության մասին,—գրում են նրանք,— տվյալներ գտնում ենք նաև Գրիգոր Մագիստրոսի (XI դ.) մոտ: Ինչպես հայտնի է, Բուլղարիան Բյուզանդիայի կողմից նվաճվելուց հետո (1018 թ.) բուլղարական շատ ազնվականներ հանձնվել են Վասիլ կայսրին՝ ստանալով պաշտոններ ու կոչումներ կայսրության բանակում: Սրանցից մեկը Նիկոլա

⁵ Ն. Բյուզանդացին ժամանակին կաղմել է Գրիգոր Մագիստրոսի թղթերի համեմատական բնագիրը, որը մատակարարել է շատ թանկարժեք, «նորարական» սրամիտ ու նրբատես ծանոթագրություններով: Նշանավոր հայագետի աշխատությունը, սակայն, տպագրության բախտին չի բաժանացել և մինչև այժմ ձեռագիր վիճակում պահվում է Շվեդիայի Ուպսալայա քաղաքի համալսարանի գրադարանում, ի շարս բանասերի մյուս թանկարժեք ու անտիպ աշխատությունների: Որանց միկրոթապավենները պահվում են Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ֆունդամենտալ գրադարանի միկրոֆիլմերի ֆոնդում (№ 28): Մագիստրոսի տաղի վերաբերյալ Ն. Բյուզանդացու ծանոթագրությունը տե՛ս նշված միկրոֆիլմի էջ 471:

⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն առաջարանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 315:

⁷ Հ. Բարթիկյան, Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը (տե՛ս «էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971, էջ 69—72):

⁸ Դիմիտր Անդելով, Վասիլ Գյուզելը, Հայկական աղբյուրները Բուլղարիայի միջնադարյան պատմության մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 47):

⁹ Այս Նիկողայոսը Վասպուրականի բյուզանդական կառավարան էր Ռոման Գ կայսեր օրոք (1028—1034). հմտ. Н. Скабеланович, Визант. государство и церковь в XI в., С. П.-бург, 1884, էջ 199: Կ. Յուզբաշյանի կարծիքով «կարելի է ընդունել, որ նա բուլղարացի հայ էր» (Арнстакес Ластивертци, перевод... К. Н. Юзбашьяна, М., 1968, էջ 153, ծ. 15): Բյուզանդագետ Լըրոն Նիկողայոս Բուլղարին կոչում է նաև Կալասիաու (Lebeau, Histoire de Bas-Empire, t. XIV, Paris, 1833, 280): Նրան հետևել են նաև Շյուսթերսեն (L'Epopée Byz., t. III, Paris, 1905, էջ 27 և «Երկրներ, Prud'homme (Histoire d'Arménie... par Arisdagues de Lastiverd, Paris, 1864, էջ 50, ծթ. 3) Նիկողայոսին նույնացրել է Կոնստանդին Կավասիլասի հետ: Կ. Յուզբաշյանը, սակայն, հայտնում է, որ դրանք տարբեր մարդիկ են (նշվ. աշխ., էջ 153, ծթ. 13 և 15): Նույն կարծիքը կրկնում է նաև Հ. Բարթիկյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 69—70):

Իուղարացին է, որը, ինչպես երևում է, մասնակցել է Հայաստանի նվաճմանը: Շատ վատ հիշողություններ է թողել այդ բուլղարացին հայ ժողովրդի մեջ»¹⁰:

Բուլղարացի գիտնականների կարծիքը ցույց է տալիս, թե որքան կարևոր նշանակություն ունի Մագիստրոսի տաղում հիշատակված նիկողոսի անձնավորության որոշումը ոչ միայն Հայաստանի, այլև առհասարակ հայ-բուլղարաբյուղանդական հարաբերությունների պատմության համար:

«Վատահամբավ նիկողոսի» անձնավորության բացահայտմամբ միաժամանակ կպարզաբանվեն Գրիգոր Մագիստրոսի՝ այսպես կոչված «բյուզանդական կողմնորոշման» մասին գոյություն ունեցող կարծիքների հետ առնչվող հարցեր: Ը. Բարթիկյանը «Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը»¹¹ խորագիրը կրող հոդվածում նիկողոսին նույնացնելով նիկոլայոս Բուրլաբի հետ՝ քննադատում է պատմական գիտությունների դոկտոր Աս. Մնացականյանի տեսակետը, որի համաձայն Գրիգոր Մագիստրոսը եղել է հայոց քաղաքամայր «Անիի դավաճանական վաճառքը» նախապատրաստողներից ու հրահրողներից մեկը և ծառայել է «Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությանը»¹²:

Քարթլիկյանի հոգվածը, ինչպես երևում է, գրված է եղել տարիներ առաջ, բայց այժմ տպագրվել է շատ ուշացումով: Ուստի Մնացականյանի տեսակետի քննադատությունն այսօր փաստորեն զուրկ է գործնական նշանակությունից, որովհետև դեռևս 1968 թ. Աս. Մնացականյանը ելույթ ունեցավ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում և փոխեց իր նախկին տեսակետը, այս անգամ հայտնելով այն կարծիքը, թե «Գրիգոր Մագիստրոսը ոչ թե բյուզանդացիների կուսակիցն էր ու հրահրողը, այլ նրանց հակառակորդներից մեկը»¹³, Մագիստրոսին «բյուզանդացիների հետ գաղտնի դաշնակցած քաղաքական գործիչ» և «թշնամու կուսակից համարելը ոչ միայն սխալ, այլև մեղի կլինեն»¹⁴,— եզրակացրել է ուսումնասիրողը:

Իր «սխալն ու մեղքը» վերացնելու նպատակով գրած հոդվածում Աս. Մնացականյանը հայտնել է այն ճիշտ միտքը, թե Մագիստրոսի «տաղը գրված է նիկողայոս ղորավարի դեմ, որը հենց նույն 1042—1043 թվականներին առաջնորդում էր բյուզանդական ղորագնդերը դեպի Անի: Եթե այդ ճակատամարտերի ժամանակ կամ նրանից ոչ շատ առաջ Գրիգոր Մագիստրոսը, իսկապես, բյուզանդացիներին գրգռողն ու զինակիցը լիներ, ապա նման բանաստեղծություն չէր կարող գրած լինել»¹⁵: Այս շեշտակի ու արդարացի շրջադարձը հիմնավորելու համար, սակայն, հարգելի դոկտորը չի բերել որևէ փաստ, որից երևար, որ տաղը գրված է իսկապես 1042—1043 թթ.: Առանց այդ փաստերի՝ տաղում հիշատակված նիկողոսը («գիշերաբուն բուլղարաց») շատ հեշտությամբ կարող է նույնացվել ոչ թե «1042—1043 թթ.» Անիի վրա հարձակված նիկողոսի, այլ՝ նիկողայոս Քրիսեիլոս Բուլղարի հետ, որը Հայաստանի պատմության աղբյուրով հանդես է գալիս միայն բյուզանդական կայսր Ռոմանոս եր-

10 Գրիգոր Անգելով, Վասիլ Գյուլեչև, Նշվ. աշխ., էջ 471:

11 Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, էջ 63—72:

12 Աս. Մնացականյան, Թոնգրակյան շաբաթնաթերթի գլխավոր հարցերի մասին (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1954, № 3, էջ 75):

13 Աս. Մնացականյան, Գրիգոր Մագիստրոսի մի տաղի հետքերով («Հայրենիքի ձայն», 1968, № 54):

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում:

որդի թագավորության ժամանակամիջոցում, այսինքն՝ 1028—1034 թթ.։ Պատահական չէ, որ բյուզանդագետ Հ. Բարթիկյանի վերոհիշյալ հոդվածում Գրիգոր Մագիստրոսի տաղը դիտված է որպես հենց այդ նիկուլայոս Քրիսելիոս Բուլղարի դեմ ուղղված գործ՝ գրված 1028—1029 թթ.։

Այսպիսով՝ եթե պարզվի, որ իրավացի է Հ. Բարթիկյանը՝ կնշանակի Աս. Մնացականյանը զրկվում է Գրիգոր Մագիստրոսին Անիի կոիվների ժամանակ բյուզանդացիների հակառակորդ համարելու իր հիմքից, որովհետև ըստ Բարթիկյանի, տաղը կապ չունի Անիի կոիվների հետ։ Եվ ընդհակառակը, եթե հայտնի դառնա, որ տաղը գրված է Անիի վրա հարձակված նիկուլայոսի դեմ՝ կհաստատվի Մագիստրոսին պատիվ բերող այն քաղաքական դիրքը, որը նա ունեցել է Բագրատունյաց Հայաստանի պատմության ամենադրամատիկական մի շրջանում, երբ հայկական զորքերը կենաց ու մահու կռիվ էին մղում ընդդեմ բյուզանդական զավթիչների։

Իրողությունը բացահայտելու համար ընթերցողին ներկայացնենք բյուզանդական մատենագրության այն միակ նմուշը, որը Հ. Բարթիկյանն իր հոդվածում բերել է ապացուցելու համար, որ Գրիգոր Մագիստրոսը տաղը գրել է ոչ թե Անիի պաշտպանության օրերին, այլ նրանից շուրջ 10—15 տարի առաջ՝ 1028—1029 թթ. և որ՝ տաղի մեջ հիշատակված է նիկուլայոս Քրիսելիոս Բուլղարը։ Վկայակոչվող փաստաթուղթն է Սկիլիցես-Կեդրենոսի «Ժամանակագրությունը», որը Հ. Բարթիկյանը իրավամբ ներկայացնում է որպես «նիկուլայոս Քրիսելիոս Բուլղարի մասին վկայող հիմնական, եթե ոչ միակ աղբյուր»¹⁶։ Այստեղ կարդում ենք. «Բերկրի (Περκίρι) բերդը՝ նրա տեր սաբակինոս Ալիմը հանձնեց հռոմեացի կայսրին, հույս ունենալով արժանանալ պատրիկության պատվին և բազում այլ փոխհատուցումների։ Նա այդ առթիվ կայսեր մոտ ուղարկեց իր որդուն։ Բերդն ստացավ պատրիկ նիկուլայոս Բուլղարը, մականունը՝ Քրիսելիոս (ὁ πατριχισὸς Νικολάος ὁ Βούλγαρος, ὁ Χρυσήλιος τὸ ἐπώνυμον)։ Սաբակինոսի որդին եկավ Բյուզանդիոն, բայց կայսեր հիվանդության պատճառով ոչ մի ուղադրության չարժանացավ։ Դրանից վրդովված, նա վերադարձավ և համոզեց իր հորը՝ ետ վերցնել սեփական բերդը։ Վերջինս թաքուն համաձայնության եկավ սահմանակից պարսիկների հետ և գիշերով գրավեց բերդը։ Օգտվելով բերդի կառավարիչ Քրիսելիոսի անհոգությունից ու անգոսնությունից, նա կոտորեց վեց հազար հռոմ զինվորների։ Բայց փոքր անց այնտեղ ուղարկվեց որպես կառավարիչ պատրիկ նիկետաս Պեգոնիտեսը, որը համառ պաշարումից հետո ռոմեացի և հռոմեական այլ ուժերի օգնությամբ գրոհով վերցրեց բերդը։ Իսկ Ալիմին և նրա որդուն սպանեց»¹⁷։

Մեր ընդգծած բառերը ցույց են տալիս, որ Սկիլիցեսի համաձայն՝ Բերկրիի կոիվներին մասնակցել են սաբակինոսները, հռոմեները, Բյուզանդիոնը, պարսիկները, ռոմները և հռոմեական այլ ուժեր, բայց երբեք՝ հայերը։ Հետևաբար՝ Հ. Բարթիկյանը սխալվել է, երբ Սկիլիցեսի հիշատակած Բերկրիի միջադեպը նույնացրել է Գրիգոր Մագիստրոսի տաղում հիշատակված այն ճակատամարտի հետ, որը հայերը մզել են ընդդեմ Հայաստան ներխուժած բյուզանդացիների։ Այս ճակատամարտը չնայած ձևով վերաբերում էր միայն «վատահամբավ նիկողասին», բայց բովանդակությամբ ուղղված է Հայաստանի բոլոր ժա-

¹⁶ Հ. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 70։

¹⁷ Նույն տեղում։ Բարթիկյանի թարգմանությունը բերում ենք աննշան ոճական փոփոխություններով։

մտնականների ոսոխների դեմ: Մազիստրոսը հայ զորականին կոչ է անում՝ ոսոխների դեմ ելնել ինչպես Հայկը Բելի դեմ: Եվ քանի որ այդ ոսոխները փաստորեն միայն քրիստոնյա բյուզանդացիներ չեն, բանաստեղծը նրանց համեմատում է հեթանոս քաղդեացիների և անհավատների հետ, որոնց դեմ պետք է կռվել Աստծու և Քրիստոսի հավատով:

Արդ միլարեայն դու պնդե՛ա, զլայնալիճ հայրենին,
 Զիրեքթեհանն մխե՛ա, յառաջ մատի՛ր և քաղեա՛ւ:
 Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմեանն Հայկայ.
 Աճապարեա՛ւ և փութա՛ւ, զի ես Կադմոսն Արամեան:
 Ահա՛ հրոսակք աճեցին, ահա՛ հասին քեզ Քաղդեայք,
 Այլ դու Տէրամբ զօրացիր և Յիսուսիւ պարծեցիր...¹⁸

2. Բարթիկյանը գրում է. «Բյուզանդիան իր տիրապետությունը տարածել էր հենց Վասպուրականում, նրա կատապան էր նշանակված Նիկոլայոս Բուլղարը, որ պատերազմ էր մղում Վանա լճի մոտ գտնվող հայոց Բերկրի քաղաքը գրավելու և, հասկանալի է, բյուզանդական ագրեսիան ավելի ծավալելու համար: Կայսրությունը... աշխատում էր աքցանի մեջ առնել և խեղդել Բագրատունյաց պետությունը: Այդ վտանգի առաջն առնելու կոչ է անում ահա Գրիգոր Մազիստրոսը իր այդ բանաստեղծության մեջ»¹⁹:

Այստեղ առաջին հայացքից ամեն ինչ ճիշտ է: Այսինքն՝ ճիշտ է, որ Նիկոլայոս Բուլղարը Վասպուրականի կատապանն էր, ո՛ր Բերկրի քաղաքը գրավելով՝ բյուզանդական ագրեսիան ավելի էր ծավալվում, ո՛ր բյուզանդական կայսրությունն իսկապես աշխատում էր խեղդել և հետագայում իրականում էլ խեղդեց աքցանի մեջ առած՝ Բագրատունյաց թագավորությունը: Բայց այս ամենը բացառապես ոչ մի կապ չունի Գրիգոր Մազիստրոսի տաղի մեջ նկարագրված դեպքերի հետ: Սկիզբիցս բաց ե՛ր բաց հայտարարում է, որ Վասպուրականի կատապան Նիկոլայոս Բուլղարը ոչ մի պատերազմ չի մղել Վանա լճի մոտ գտնվող հայոց Բերկրի քաղաքը գրավելու՝ համար: Այդ հայոց քաղաքի»²⁰ տեղի ստորակինոս» Ալիմն ինքն էր իր հոժառ կամֆով քաղաքը հանձնել բյուզանդացիներին՝ հույս ունենալով արժանանալ պատրիկության պատվին: Ուրեմն՝ 2. Բարթիկյանի կառած՝ Նիկողոսի հաճախվումը առհասարակ գոյություն չի ունեցել: Հետևաբար՝ այդ շեղյալ պատերազմի» առթիվ արված հայտարարությունը պետք է համարել սոսկ պատահական վրիպման արդյունք, որը չպետք է թափանցի պատմագիտության մեջ:

18 Գր. Մազիստրոսը հայ-բյուզանդական պատերազմը Հայկի և Բելի պատերազմի հետ համեմատել է օգտագործելով Մովսես Խորենացու մի շարք բառեր (լայնալիճ, աճապարեա, զիրեքթեթեհանն և այլն): Խորենացուց են քաղված նաև Հայկ, Բել, Թորգոմ, Կադմոս, Արամ անունները: Կասկածից վեր է, որ Մազիստրոսն իր առջև ուներ կամ անգիր գիտեր Հայկի և Բելի առասպելն իր բոլոր մանրամասնություններով: Հետևաբար՝ անհնարին է, որ նա չիմանար, որ Արամանեակի որդու անունը Կադմոս է և ոչ՝ Կադմեան: Վերջին ձևը անկասկած դրական աղավաղում է, այդ իսկ պատճառով էլ մենք չլուրջ թէ եկնիս վերականգնմանը նվիրված մեր հիշյալ ուսումնասիրության մեջ վերականգնել ենք նաև Կադմոսս անունը, որը մեզ հասած ձևագրերում ամենուրեք աղավաղված է Կադմեանն: հղվածակով:

19 2. Բարթիկյան, Նշվ., աղբ., էջ 72,

20 2. Բարթիկյանի նշած հայոց քաղաքում, այդ օրերին հավանաբար հայ բնակչություն առհասարակ չկար, իսկ քաղաքը պատկանում էր մահմեդական էմիրին: Մատթեոս Ուհայանցին

Եթե անգամ այդ հարձակումը տեղի ունեցած էլ լինե՞ր՝ դարձյալ այն ոչ մի ձևով չէր կարող առնչվել Գրիգոր Մագիստրոսի տաղում հիշատակված «Հայկի և Բելի հանդեսի» հետ, որովհետև Սկիլիցեսի հիշատակած Բերկրիի պատերազմը մղվում էր մանմեղականների և բյուզանդացիների միջև, այսինչ՝ Մագիստրոսի տաղը վերաբերում է հայերի կռիվներին ընդդեմ բյուզանդացիների:

Նիկուլայոս Բուլղարի և «Նիկուլայոս Կավասիլասի» փոխհարաբերություններին նվիրված մեր ծանոթագրությունն մեջ ասացինք, որ Արիստակես Լաստիվերտցու հրատարակիչ ու հմուտ թարգմանիչ, բյուզանդագետ Կ. Յուդաշյանը Նիկուլայոս Բուլղարին նույնացրել է Մատթեոս Ուռհայեցու հիշատակած հայ իշխան Գանձիի հետ²¹: Եթե սա իսկապես այսպես է, ապա Բերկրին գրաված «բյուզանդացիները» առհասարակ դադարում են գոյություն ունենալուց, որովհետև Գանձին Բերկրին գրավեց հայկական զորքով. «Յայսմ ժամանակի զօրաժողով արար իշխանն Հայոց Գանձի և գնացեալ էառ զբաղաքն Բերկրի... և կոտորեաց առ հասարակ զամենայն քաղաքն և ի սուր սուսերի մաշեաց զօրսն Տաճկաց... Եւ այսպիսի պատերազմաւ անհոգացեալ կային զօրքն Հայոց»²²:

Քանի որ Բերկրին գտնվում է Վանա լճի մոտ՝ Բարթիկյանը անուղղակիորեն հասկացնել է տալիս, թե Մագիստրոսը խորհնացու օրինակով հայոց պատերազմը Հայկի և Բելի կովի հետ համեմատելիս նկատի է ունեցել նաև «դեպքերի աշխարհագրական միջավայրը» («Դեպքերի աշխարհագրական միջավայրը ևս շատ բան է ասում»), այսինքն՝ ակնարկել է Հայկի և Բելի ճակատամարտի վայրում՝ Վանա լճի մոտ գտնվող Բերկրիի անվան հիշատակության: Խորհնացին Հայկի և Բելի ճակատամարտի վայրն է նշում Հայոց ձորը («այսօրիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր»): Մագիստրոսն իր առջև ունեցել է, հաս, խորհնացու այս բառերը: Ինչ վերաբերում է Վանա լճին՝ ապա դրա հիշատակությունը գտնվում է Բարթիկյանի վկայակոչած և 1944 և 1959 թթ. հրապարակված երկու ուսանքներ գրքերում²³, որոնց մասին Մագիստրոսն անշուշտ չէր կարող իմանալ 11-րդ դարում:

(Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 74) հայտնում է, որ քաղաքը գրավելիս Գանձի իշխանը «կոտորեաց առ հասարակ դամենայն քաղաքն»: Այս Գանձին, ինչպես քիչ հետո կտեսնենք, հայ էր և Բերկրին գրավեց հայոց զորքով: Հետևաբար նրա կոտորած զամենայն քաղաքին ազգաբնակչությունը հայ չէր, իսկ քաղաքի պաշտպանները որոշակիորեն տաճիկներն էին («ի սուր սուսերի մաշեաց զօրսն տաճկաց»): Պատրիկ Նիկևտաս Պեգոնիտեսի ձեռքով Բերկրին մահմեդականներից գրավելուց և Ալիմին սպանելուց հետո, ինչպես երևում է, հայերը կրկին վերադարձել են իրենց բնակավայրը. Ուռհայեցին (էջ 118) «սուլտան» Տուղրիի գրաված հայաբնակ քաղաքների շարքում հիշում է նաև Բերկրին:

²¹ Հիացմունքի է արժանի հայերեն «գանձ» և հունարեն Χρυσός («սոսկի») բառերի սրամիտ համեմատության միջոցով Քրիստիոսի և Գանձիի նույնացման փորձը, որն անկասկած ավելի համոզիչ կլիներ, եթե Բյուզանդիայի պատմությանը հայտնի չլինեին Քրիստիոս Բուլղարից բացի նաև «Քրիստիոս» մականունը կրած ուրիշ գործիչներ, որոնց միջոցով ապացուցվում է, որ «Գանձի» (Χρυσήλιος) մականունը բյուզանդական ծագում ունի:

²² Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 74:

²³ Б. Б. Пнотровскнй, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 283, նույնի Ваяское царство, Москва, 1959, էջ 7—8:

2. Բարթիկյանը կապ է տեսել նաև հորենացու «յերկիրն Արարադայ» և Մագիստրոսի «Այրառատեանն զագաթն» արտահայտությունների միջև և սրանից էլ եզրակացրել է, թե Մագիստրոսը լեզու է անում մարտի դուրս գալ Այրառատեան կատարն հասած նիկոզաս Բուզարի դեմ, այսինքն՝ Բյուզանդիայի դեմ, այնպես, ինչպես յերկիրն Արարադայ հասած Բելի դեմ դուրս եկավ Հակյրս²¹։ Սակայն ավելորդ է ասել, որ ոչ մի նմանություն չկա հորենացու և Մագիստրոսի արտահայտությունների միջև։ Խորենացին «յերկիրն Արարադայ» արտահայտությամբ նշել է ամբողջ Հայաստանը, իսկ «Այրառատեանն զագաթն» արտահայտությունը վերաբերում է Մասիս սարին, այն էլ՝ նրա միայն դագաթին։ Սրանք տարբեր բաներ են։ Եվ՝ եթե խորենացին կարող էր գրել, որ Բելը հասել է Արարատյան երկիրը, ապա Մագիստրոսը չէր կարող ասել, թե «նիկոզաս Բուզարը, այսինքն՝ Բյուզանդիան» բարձրացել էր Մասիսի գագաթը։

Խոր միջնադարում Մասիսի գագաթը բարձրանալու մասին՝ Մագիստրոսի պես գիտնականը չէր կարող խոսել նույնիսկ փոխաբերական իմաստով։ Իսկ և՛ խոսքեր էլ՝ գրանով դարձյալ նպաստած կլինեին մեր տեսակետին, որովհետև Արարատի գագաթը Բերկրիից հեռու է շուրջ հարյուր կիլոմետրով, հետևաբար՝ Մագիստրոսը չէր կարող Բերկրիում կատարված դեպքի վայր նշել Արարատի գագաթը... Այնպես որ՝ հարգելի բյուզանդագետը պարզապես բոլոր կողմերով սխալվել է, նոր Մագիստրոսի ոգեշունչ մարտական բանաստեղծությունը, որը փաստորեն մի կատարյալ ազգային ռազմական հիմն է, հարմարեցրել է այնպիսի մի միջադեպի, ինչպիսին էր սարակինոս Ալիմի կողմից Բերկրի քաղաքի կամավոր հանձնումը բյուզանդացիներին, մի դեպք, որը բոլոր հայ և օտար մասնագետները փրավամբ գիտել են որպես մահամեղականների և բյուզանդացիների միջև տեղի ունեցած միջադեպ²⁵։

Իսկ ո՞րն է իրականում Գրիգոր Մագիստրոսի բանաստեղծության մեջ հիշատակված այն հերոսական ճակատամարտը, որը հայրենասեր բանաստեղծը կարող էր փրավամբ համարել Հայկի և Բելի կռվի մի օրինակը²⁶։ Դա Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկի և բյուզանդական զորավար պարակլիմոմենոս նիկոլայոսի²⁷ միջև հայոց քաղաքամայր Անիի համար մղված պատերազմն էր, որը բյուզանդացիները ձեռնարկել էին Բագրատունյաց թագավորությունը իսպառ վերացնելու մտադրությամբ և որը պսակվեց հայ մարտիկներին, թեկուզև՝ ժամանակավոր, բայց հերոսական հաղթությամբ։

²⁴ 2. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 72։

²⁵ Հմմտ. Lebeau, Histoire du Bas-Empire, էջ 280, Н. С каба л а н о в и ч, էջ 189, G. Schlumberger, L'Epopée Byz., III, 1905, էջ 134, 207, R. Grousset, Histoire de l'Arménie, Paris, 1947, էջ 562—564, և ե. ո. Նրկերի ժողովածու, հ. 2, Նրևան, 1967, էջ 667, Ա. Տ ե ր - Ղ ե ո ս ղ յ ա ն, Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Նրևան, 1965, էջ 201—202 և այլն։

²⁶ Անիի վրա Բյուզանդիայի առաջին հարձակման (Միքայել Իսսիտես) թվականը հայ աղբյուրները համարում են 1043 թ. (Schlumberger, էջ 482, և ե. ո. Նրկերի ժողովածու, հ. 2, 1967, էջ 676), իսկ պարակլիմոմենոս նիկոլայոսի հարձակումը տեղի է ունեցել Իսսիտեսից հետո, 1043—1045 թթ. միջև։

²⁷ Անիի վրա հարձակված պարակլիմոմենոս նիկոլայոս ներքինու վերաբերյալ բյուզանդական աղբյուրների վկայությունները և նրա զործունեության մասին տե՛ս G. Schlumberger, L'Epopée Byz., t. III, Paris, 1905, էջ 5, 6, 29, 30, 389, 390, 473, 483, 489, 491, 495, 496 և այլն, նաև՝ Н. С каба л а н о в и ч, էջ 152, 322, 323։

Արդ՝ հնարավոր է, որ բյուզանդացիների հրահրած այս պատերազմը վարում էր դարձյալ Նիկողայոս Քրիսելիոս Բուլղարը: Զե՞ որ նա կարող էր ժամանակակից լինել նաև այս պատերազմին, բացի այդ՝ տաղի մեջ գտնվող «գիշերաբուն Բուլղարաց» արտահայտությունը իսկապես կարող է ստեղծել այդ տպավորությունը: Ֆրանսիացի գիտնական Մ. Բրոսսեն հենց գործնականում էլ Անիի վրա հարձակված Նիկոլասին նույնացրել է Նիկոլաս Բուլղարի հետ²⁸:

Այս հարցին սպառնչ պատասխան է տալիս XI դ. մեզ հասած և հենց պարակիմոմենոս Նիկողասին պատկանած անձնական կնիքը, որին, որքան մեզ հայտնի է, բյուզանդագետները քննվող հարցի կապակցությամբ մինչև օրս չեն անդադարձել: Նկատի ունենք նշանավոր բյուզանդագետ Շլյումբերգի անձնական արխիվում ժամանակին պահված այն կնիքը, որի վրա դրոշմված են պարակիմոմենոս Նիկողայոսի պաշտոններն ու աստիճանները: Կնիքի գծանկարը Շլյումբերգին զետեղել է բյուզանդական կնիքների ժողովածուում²⁹ և Բյուզանդիայի պատմությանը նվիրված իր մեծարժեք աշխատության երրորդ հատորում³⁰, Գծանկարի մեջ կարդում ենք. «KE BOHΘEI TΩ CΩ ΔΟΥΔΩ ΝΙΚΟΔΑΩ ΠΡΟΕΔΡΩ ΠΑΡΑΚΟΙΜΩΜ(ΕΝΩC) ΔΟΜΕCΤΙΚ(Ω) ΤΩΝ CΧΟΔ(ΩΝ) ΤΗΣ ΑΝΑΤ(ΟΛΗC)»: Ինչպես տեսնում ենք, կնիքի տերն ունցել է պրոեդրոսի (πρόεδρος) աստիճան: Սա վերաբերում է զրեթև ալն տարիներին, երբ ապրել ու գործել է Նիկոլաս Քրիսելիոս Բուլղարը³¹: Հետևաբար՝ եթե կնիքի տեր Նիկողասը և Վասպուրականի կառավարիչ Նիկողաս Բուլղարը միևնույն անձնավորությունները լինեին՝ պետք է, որ Նիկողաս Բուլղարը նույնպես պրոեդրոսի աստիճան ունենար: Սա բյուզանդական կայսրության շատ բարձր աստիճաններից էր: Բյուզանդագետ Սկարալանովիչը պրոեդրոսի աստիճանը նշում է որպես վեցերորդ աստիճան³²:

Քիչ հետո կտեսնենք, որ Նիկողայոս Քրիսելիոս Բուլղարը պրոեդրոսի աստիճան չուներ, իսկ այժմ հայտնի դարձնենք, որ պարակիմոմենոս Նիկոլաս Ներքինու պրոեդրոսական աստիճանի և այլ պաշտոնների մասին կնիքի վրա դրոշմված տեղեկությունը հաստատվում է նաև Կեդրենոսի վկայություններով: Այս պատմիչը հայտնում է, որ Կոստանդ Ը կայսրը, Վասիլ 2-րդ կայսեր մահից հետո (1026 թ. դեկտեմբեր) Նիկոլասին դարձնում է պարակիմոմենոս և սքոլաց դոմեստիկոս. Δομέστικον τῶν σχολῶν καὶ παρακοιμωμενον³³: Մեկ այլ էջում հայտնվում է Նիկոլասի պրոեդրոսական աստիճանի մասին αὐτὸ Νικόλαος πρόεδρος³⁴: Գ. Շլյումբերգին հենվելով Կեդրենոսի վրա, գրում է. «Քսան

28 Մ. Բրոսսեն լեբոյի գրքին կից մի ծանոթագրության մեջ Անիի վրա հարձակված Նիկոլասին նույնացնում է Նիկոլաս Կավասիլասի կամ Քրիսելիոսի հետ (Lebeau, Histolre de Bas-Empire, t. XIV, Paris, 1833, էջ 335, թթ. 2): Գրեթե միևնույն կարծիքն են կրկնել նաև Ն. Բյուզանդացին (2002 ՅԱՅԳ, ՄՅ № 128, էջ 471) և Կ. Կոստանյանցը (Գրիգոր Մազիստրոսի թղթերը, էջ 315), որոնք Մազիստրոսի հիշատակած Նիկողասին սխալմամբ կոչում են նաև Նիկոլաս Կավասիլաս:

²⁹ G. Schiumberger. Sigillographie de l'Empire Byzantin, Paris, 1884, էջ 334.

³⁰ G. Schiumberger, L'Epopée Byz., t. III, 1905, էջ 5.

³¹ Կնիքի ժամանակի մասին տե՛ս G. Schiumberger, Sigillographie de L'Empire Byzantin, Paris, 1884, էջ 334.

³² Н. С ка б а л а н о в и ч, Византийское государство, էջ 152.

³³ Georgii Cedreni Historiarum compendium, t. II, Bonnæ, 1839, էջ 480.

³⁴ Նույն տեղում, էջ 558.

տարի անց (1046 թ.— Գ. Ա.) դոմեստիկոս նիկողասը վայելում էր նաև Մոնոմախի համակրանքը։ Մենք նրան տեսնում ենք Արևելքի բոլոր ուժերի գլուխն անցած, իրեն է ենթարկում նշանավոր Գագիկ թագավորին, նրա հնամյա մայրաքաղաք Անիում, և վերջ է դնում հայոց գլխավոր թագավորությանը³⁵։

Արդ՝ տեսնենք ինչ աստիճան ունեն Նիկողայոս Քրիսելիոս Բուլղարը։ Բերկերիի կապակցությամբ Սկիլիցեսը գրում է. «Բերդն ստացավ պատրիկ Նիկողայոս Բուլղարը, մականունը Քրիսելիոս»՝ ὁ πατρικίος Νικολάος ὁ Βουλγαρός. ὁ Χρυσήλιος τὸν ἐπώνυμον³⁶։ Ինչպես տեսնում ենք, Նիկողայոս Բուլղարը կոչված է «պատրիկ Նիկողայոս» (πατρικίος Νικολάος)։ Իսկ պատրիկի աստիճանը Սկաբալանովիչի աստիճանացուցակում նշված է որպես 11-րդ աստիճան, այսինքն՝ հինգ աստիճանով ցածր այն աստիճանից, որն ունեն Անիի վրա հարձակված պրոեդրոս նիկուասը։

Այսպիսով՝ վերջնականապես պարզվում է, որ Վասպուրականի կատապան Նիկողայոս Քրիսելիոս Բուլղարը և Անիի վրա հարձակված «Նիկողայոս պրոեդրոս, պարակիմոմենոս, սբուլաց դոմեստիկոսը» տարբեր անձնավորություններ են։ Գրիգոր Մագիստրոսն իր տաղն ուղղել է երկրորդ նիկողասի դեմ։ Այս կարևոր փաստի բացահայտմամբ միաժամանակ հայտնի է դառնում, որ Անիի վրա կատարված բյուզանդական հարձակումների ժամանակ (1043—1045 թթ.) Գրիգոր Մագիստրոսը կոչ է արել՝ դուրս դալ ընդդեմ բյուզանդական զավթիչների և ոչ թե՛ բռնել է բյուզանդացիների կողմը, ինչպես կարծել են ոմանք։

ВИЗАНТИЙСКИЙ ПОЛКОВОДЕЦ НИКОЛАЙ У ГРИГОРА МАГИСТРОСА

Г. В. АБГАРЯН

Доктор филологических наук

Резюме

В стихотворении, начинающемся словами «Լուսք թէ եկն», Григоръ Магистрос призывает защитников родины героически сражаться против войск Николаса. Николас в стихотворении назван «գիշերաբուն բուլղաբաց», т. е. «ночная сова болгар». Такое прозвище привело специалистов к выводу, что слова Магистроса направлены против византийского катапана Васпуракана, патрикия Николая Болгара, по прозвищу Хриоилий, и что стихотворение написано в 1028—1029 гг.

Изучение фактов рассказывает несостоятельность такого предположения. Григор Магистрос имел в виду паракимомена Николая, который по заданию византийского императора Константина Мономаха в 1043—1045 гг. напал на столицу Армении—Ани.

Установлением даты написания стихотворения одновременно выясняется, что Григор Магистрос в дни защиты столицы был не сторонником (как предполагали некоторые специалисты), а противником захватчиков Ани, против которых и он написал свое стихотворение.

³⁵ G. Schlumberger, Sigillographie, Paris, 1884, 335. Նիկողասը առաջին անգամ չկարողացավ Անին գրավել և միայն Անիի թագավորության անկումից հետո է, որ նա հայոց մայրաքաղաքը դարձրեց իր աթոռատեղին։

³⁶ 2. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 70։